ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1954 Общественные науки

Գ. Մնեյան

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՊԱՅՔԱՐԸ ԼԵՆԻՆՅԱՆ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ԳԾԻ ՀԱՄԱՐ, 1905 Թ. ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ

1905 թվականի ռուսական առաջին ռևոլյուցիան, որը ցնցեց ողջ Ռուսաստանը և ոտքի հանեց ռուսական պրոլետարիատին՝ մասսայական քաղաքական պայքարի, ցույց տվեց, որ Ռուսաստանը թևակոխում էր համաժողովրդական ռևոլյուցիայի փոթորկոտ մի շրջան։

Երկրի քաղաքական կյանքում առաջացած խորը ցնցումները շարժման մեջ դրին բոլոր դասակարգերին և պարտիաներին, որոնք սկսեցին մշակել իրենց վերաբերմունքն ու դիրքը դեպի ռևոլյուցիան։ Այդպիսի պայմաններում բանվոր դասակարգը և նրա ղեկավար սոցիալ-դեմոկրատական պարտիան, որն ավելի շատ էր շահագրգռված ռևոլյուցիայի հարցով, պետք էր մշակեր իր հստակ քաղաքական գիծը ռևոլյուցիայի մեջ։

Ռևոլյուցիայի բարձրացող ալիքը պարտիայի և բանվոր դասակարգի առաջ անհետաձգելի խնդիր դրեց՝ մշակելու զինված ապստամբության, ցարական կառավարության տապալման, ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարության ստեղծման, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի, լիբերալ բուրժուազիայի նկատմամբ վերաբերմունքի հարցերը։

Հարկավոր էր մշակել սոցիալ-դեմոկրատիայի միասնական մարքսիստական տակտիկան այդ հարցերի մասին։

Սակայն ՌՍԴԲՊ-ի մեջ միասնության բացակայությունը հնարավորություն չէր տալիս մշակելու միասնական մարքսիստական տակտիկա։ Մենշևիկները ստորաքարշություն անելով լիբերալ բուրժուազիայի առաջ, իրենց բռնած օպորտունիստական դիրքով ամեն կերպ խանգարում էին միասնական ռևոլյուցիոն քաղաքական գծի մշակմանը։ Նրանք ձգտում էին պրոլետարիատի և գյուղացիության ելույթները սահմանափակել զուտ տնտեսական ռեֆորմների պահանջով, պրոլետարիատին տանել լիբերալ բուրժուազիայի պոչից։

Բոլշևիկները հանդիսանում էին միակ ռևոլյուցիոն մարքսիստական ուժը երկրում։ Նրանք տեսնում էին զարգացող համաժողովրդական ռևոլյուցիայի հեռանկարները և այդ ուղղությամբ էլ կազմակերպում էին պրոլետարիատի և գյուղացիների ելույթները։ Բոլշևիկները գտնում էին, որ ռևոլյուցիայի հուզող հարցերը լուծելու համար հարկավոր է անհապաղ հրավիրել պարտիայի սոր համագումար։ Լենինը, համառ պայքար ծավալելով մենշևիկների ու նրանց ձեռքն անցած կենտկոմի օպորտունիստական գործունեության դեմ, նախապատրաստական լայն աշխատանք ծավալեց պարտիայի 3-րդ համագումարի հրավիրման համար։

Ստեփան Շահումյանը Ի. Վ. Ստալինի, Միխա-Ցխակայի, Ջաբարիձեի, Կնունյանցի և ուրիշների հետ միասին հսկայական աշխատանք է տանում պարտիայի 3-րդ համագումարի հրավիրման գործում։ Նա, որպես Կովկասյան Միութենական Կոմիտեի անդամ, շրջագայում է Անդրկովկասի արդյունաբերական և գյուղական ռայոնները, հրավիրում է տեղական կազմակերպություն-

ների ժողովներ, հանդես է գալիս լենինյան տակտիկական գծի մասին զեկուցումներով։

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները հանդիսացել են մեր պարտիայի հավատարիմ հենարանը, հետևել և կենսագործել են նրա որոշումները։

Անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների 1904 թվականի Նոյեմբերյան կոնֆերանսը խստորեն դատապարտում է մենշևիկյան կենտկոմի օպորտունիստական գիծը և պահանջում անհապաղ հրավիրել պարտիայի 3-րդ համագումար, մշակել ռևոլյուցիան գլխավորելու միասնական տակտիկական գիծ։

1905 թվականի մարտին Կովկասյան Միութենական Կոմիտեն տեղական բոլոր կազմակերպություններում անց է կացնում քվեարկություններ՝ համագումարի հրավիրման մասին։ Կազմակերպության անդամների ճնշող մեծամասնությունը միանում է լենինյան պահանջին, ընտրում իր դելեգատները՝ համագումար ուղարկելու համար։ Համագումարի հրավիրման կամպանիան Հայաստանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունում անց էր կացնում Ստեփան Շահումյանը։

* * *

Մինչև համագումարը՝ Լենինը մշակել էր բոլշևիկների տակտիկական գիծը։ Նա կազմել էր համագումարում քննվող հարցերի բանաձևերի նախագծերը։ Համագումարի հիմնական հարցերի շուրջը զեկուցումով հանդես եկավ Լենինը։

Նրա կողմից կազմված բանաձևերը՝ զինված ապստամբության, պրոլետարիատի հեգեմոնիայի, ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարության, լիբերալ բուրժուազիայի նկատմամբ վերաբերմունքի, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի մասին և այլն, միաձայն ընդունվեց համագումարի կողմից։

Լենինյան ստրատեգիական պլանը որոշում էր ռևոլյուցիայի շարժիչ ուժերը, հարվածի գլխավոր ուղղությունը, պրոլետարիատի հեգեմոնիան, նրա մարտական ռեզերվները, ուժերի դասավորումը։

Լենինյան ստրատեգիական պլանը հաշվի էր առնում բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի լիակատար հաղթանակը և նրա վերաճումը սոցիալիստական ռևոլյուցիայի։

Համագումարն ընդգծեց, որ ռևոլյուցիան կհաղթանակի միայն այն դեպքում, եթե նրան գլխավորի պրոլետարիատը, եթե պրոլետարիատն ապահովի իր դաշինքը գյուղացիության հետ, եթե լիբերալ բուրժուազիան իրոք չեզոքացվի ռևոլյուցիայից։ Լենինյան այդ ստրատեգիական պլանը համագումարն ընդունեց ամբողջովին։

Լենինը հանճարեղորեն հիմնավորեց պարտիայի և պրոլետարիատի տակտիկան ռևոլյուցիայի մեջ, ստեղծեց Կոմունիստական պարտիայի քաղաքական (տակտիկական) հիմքերը, և այդպիսով հարստացրեց ու զարգացրեց մարքսիզմը պրոլետարական ռևոլյուցիայի նոր թեորիայով, առանց որի չէր կարելի հաղթել ցարիզմին ու կապիտալիզմին, չէր կարելի հաստատել ու ամրապնդել պրոլետարիատի դիկտատուրան մեր երկրում։

Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները զգալի աշխատանք ծավալեցին համագումարի որոշումների պարզաբանման ու կենսագործման ուղղությամբ։ Զինված լենինյան դրույթներով, նրանք համարձակ

հանդես էին գալիս մենշևիկների դեմ ու վստահորեն գլխավորում պրոլետարիատի ու աշխատավոր գյուղացիության պայքարը։

Լենինյան տակտիկական գիծը Անդրկովկասի պարտիական կազմակերպությունները պաշտպանում էին մենշևիկների և նացիոնալիստական այլ պարտիաների դեմ համառ պայքարի մթնոլորտում։ Այդ պայքարում Ի. Վ. Ստալինի հետ միասին, ակտիվ գործունեություն է ծավալում Լենինի հավատարիմ աշակերտ ու զինակից Ստեփան Շահումյանը։

Գլխավորելով Կովկասում լույս տեսնող բոլշևիկյան մամուլը — («Պրոլետարիատի կռիվ», «Կայծ», «Նոր խոսք», «Բանվորի կյանք», «Օրեր») Շահումյանը լայն պրոպագանդա է մղում լենինյան դրույթների մասսայականացման համար։ Ղեկավարվելով պարտիայի 3-րդ համագումարի որոշումներով և Լենինի «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական ռևոլյուցիայի մեջ» հանճարեղ աշխատությամբ, նա իր հոդվածներում պաշտպանում ու հիմնավորում էր լենինյան ուսմունքը ռուսական ռևոլյուցիայի բնույթի, շարժիչ ուժերի, զինված ապստամբության, ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարության, պետական դումաների, պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի հարցերի մասին։

Շահումյանն իր «Ութ ժամյա բանվորական օրը և բանվորների պետական ապահովագրությունը», «Ռևոլյուցիայի հարձակումը», «Արթնացե՛ք», «Տակտիկական հարցեր», «Սոցիալ-դեմոկրատիան և կադետները», «Պլեխանովի նամակի առթիվ», «Լ. Մարտովի նոր հայտնագործությունը» և այլ հոդվածներում հիմնավորում էր բոլշևիկների վերաբերմունքը դեպի ռևոլյուցիան։ Մերկացնելով մենշևիկների օպորտունիստական գիծը, նա ընդգծում էր, որ ռևոլյուցիայի հիմնական խնդիրը հանդիսանում է ճորտատիրական մնացորդների արմատական լիկվիդացիան։

Վ. Ի. Լենինն իր «Երկու տակտիկա» աշխատության մեջ խոսելով ռուսական և եվրոպական բուրժուական ռևոլյուցիաների տարբերության մասին, ռուսական ռևոլյուցիայի առանձնահատկությունը համարում էր այն, որ այդ ռևոլյուցիայի մեջ պրոլետարիատը հանդես էր գալիս որպես հեգեմոն դասակարգ, ունենալով այնպիսի մի դաշնակից, ինչպիսին էր ռուսական գյուղացիությունը։

Ստ. Շահումյանը լենինյան դիրքերից բացատրում է այդ հարցը։ Ռուսական ռևոլյուցիան համարելով բուրժուա-դեմոկրատական, Շահումյանը միևնույն ժամանակ ընդգծում էր նրա արմատական տարբերությունն Արևմտյան Եվրոպայի բուրժուական ռևոլյուցիայից։ Այդ ռևոլյուցիայի առանձնահատկությունը նա, առաջին հերթին, համարում էր այն, որ ի տարբերություն եվրոպական բուրժուական ռևոլյուցիաների, ռուսական ռևոլյուցիայի շարժիչ ուժը և հեգեմոնիան պրոլետարիատն է։ «Ութ ժամյա բանվորական օրը և բանվորների պետական ապահովագրությունը» հոդվածում Շահումյանը նշում էր, որ «Ներկայիս ռուսական ռևոլյուցիան նույնպես, ինչպես և հիշատակված եվրոպական բոլոր ռևոլյուցիաները, բուրժուական են, այն մտքով, որ նրանք չեն վերացնում բուրժուական մասնավոր սեփականությունը և բուրժուական գույքային հարաբերությունները, այլ ընդհակառակը պայմաններ են ստեղծում վերջինների զարգացման համար։ Կրկնում ենք, այդ կողմից ռուսական մեծ ռևոլյուցիան ամբողջովին նման է ֆրանսիական մեծ և եվրոպական ուրիշ ռևոլյուցիաներին։

Սակայն ռուսական ռևոլյուցիան միաժամանակ խիստ տարբերվում է հիշ-

յալ ռևոլյուցիաներից մի ուրիշ կողմով։ Բոլոր այդ եվրոպական ռևոլյուցիաները կատարվել են բուրժուազիայի ղեկավարությամբ։ Ռուսական Մեծ ռևոլյուցիան կատարվում է պրոլետարիատի ղեկավարությամբ։ Իր դասակարգային շահերը գիտակցած, բուրժուազիայի խնամակալության տակից դուրս պրծած, միջազգային սոցիալ-դեմոկրատիայի դրոշի տակ որպես ինքնուրույն դասակարգային պարտիա կազմակերպված Ռուսաստանի պրոլետարիատը ոչ միայն արյուն է թափում, այլև ներկա ռևոլյուցիայի մեջ հանդես է գալիս որպես տեր ու տիրական։ Այս հանգամանքը ռուսական ռևոլյուցիայի հսկայական առավելությունն է եվրոպական բուրժուական ռևոլյուցիայից»[1]։

Ստեփան Շահումյանի աշխատություններում և հոդվածներում կարմիր թելի պես անցնում է պրոլետարիատի հեգեմոնիայի ու նրա պատմական դերի լենինյան տեսությունը։

Բոլշևիկյան տակտիկայի կարևորագույն հարցերից էին զինված ապստամբության և ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարության հարցերը։ Մենշևիկները և պրոլետարիատի թշնամի այլ պարտիաները, վախենալով ժողովրդական ռևոլյուցիայից, առաջ էին քաշում ցարիզմի հետ խաղաղությամբ վարվելու և «սոցիալական ռեֆորմների» ծրագիրը։ Լենինն իր «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական ռևոլյուցիայի մեջ» աշխատությունում ջախջախիչ հարված էր հասցնում օպորտունիստներին, որոնք դասակարգային հաշտություն էին քարոզում բռնակալության հետ։ Լենինը, զարգացնելով զինված ապստամբության մարքսյան տեսությունը, ցույց տվեց, որ ցարիզմի տապալման և երկրում նոր ժողովրդական դեմոկրատիայի հաղթանակի կարևորագույն պայմանը հանդիսանում է համաժողովրդական զինված ապստամբությունը, որի գլուխը պետք է կանգնի բանվոր դասակարգը, քանի որ «Դեմոկրատական ռևոլյուցիայի իրականացումը Ռուսաստանում հնարավոր է ժողովրդական ապստամբության հաղթանակի հետևանքով միայն»[2]։

Ռուսական մենշևիկները և ամբողջ II ինտերնացիոնալի օպորտունիստները զինված ապստամբության լենինյան տեսությունը համարում էին «անմտություն», «բունտարարություն»։ Նրանք, չխորանալով Ռուսաստանում կատարվող քաղաքական դեպքերի բուն էության մեջ, չէին ցանկանում տեսնել, որ պրոլետարիատի և գյուղացիության մասսայական ելույթներն արդեն հասունացել ու վեր էին ածվում զինված ապստամբության։

Ստեփան Շահումյանը, մերկացնելով մենշևիկների օպորտունիստական դիրքը, իր «Նոր կուրսը և ռևոլյուցիան» հոդվածում վեր հանելով լենինյան հայացքը զինված ապստամբության և նրա մեջ պրոլետարիատի վճռական ղեկավար դերի մասին, գրում էր. «Նա հաստատուն կերպով կպատրաստվի, ձեռք կբերի բոլոր անհրաժեշտ միջոցները, կզինվի բոլոր նյութական ու բարոյական զենքով և այնպես ուժեղ ու հաղթական կհնչեցնի ընդհանուր ապստամբության փողը, որը կջախջախի տիրող ռեժիմը, անեծքի հիշատակ թողնելով «ազատամիտ» ստոլիպիններից ու տրեպովներից»[3]։

Մերկացնելով մենշևիկների լիբերալ բուրժուական վարքագիծը ռևոլյուցիայի մեջ, Շահումյանը նշում էր, որ նրանց քաղաքական փիլիսոփայությունը հանդիսանում է «օսվոբոժդականների» փիլիսոփայության կրկնաերգը։ Ինչ-

---

1 Ս. Շահումյան, Հոդվածներ և ճառեր, Հայպետհրատ, Երևան, 1953, էջ 21—22։
2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 9, էջ 9։
3 «Կայծ», 1906, № 42։

պես հայտնի է, մենշևիկները գտնում էին, որ Ռուսաստանը չի հասունացել ռևոլյուցիայի համար, հետևաբար զինված ապստամբության կոչը — «անարխիզմ է», «անհեթեթություն է»։ Նրանք Ռուսաստանի տնտեսական և քաղաքական զարգացումն ընդունում էին զուտ խաղաղ ռևոլյուցիայով, ժխտում էին տիրող կարգերի բռնի տապալումը, ռևոլյուցիայի հնարավորությունը։

Ստեփան Շահումյանը, մերկացնելով մենշևիկների ռեֆորմիստական հայացքները հասարակության զարգացման վերաբերյալ, իր «Էվոլյուցիոնիզմը և ռևոլյուցիոնիզմը հասարակական գիտության մեջ» (1905 թ.) հայտնի հոդվածում գրում էր. «...կարելի՞ է արդյոք ռևոլյուցիաները հայտարարել պատմականորեն «անօրինաչափ», «վնասակար», «անարդար», «անբարոյական», ուստի և դատապարտելի ակտեր։ Դրված հարցերին դրական պատասխան տալու համար պետք է լինել անհուսալի, կույր ֆիլիստեր, կամ ակնհայտ սրիկա, իր դարն անցած և ամբողջ հասարակությունը ճնշող հին կարգերի կողմնակից»[1]։ Շահումյանը, փաստերով մերկացնելով մենշևիկների ռեֆորմիստական քաղաքականությունը, ցույց էր տալիս, որ նրանք կանգնած են լիբերալ բուրժուական տեսակետի վրա և հանդիսանում են բուրժուական ռեֆորմիստներ։ Ժխտելով ռևոլյուցիոն ուղիով ցարիզմի տապալման լենինյան գիծը, մենշևիկները փորձում էին կանգնեցնել ռևոլյուցիայի փոթորկալի երթը և ձգտում էին «խաղաղ բարեկարգումների վերևից». այդ գիծը Շահումյանը որակում էր որպես ռեակցիային օգնող գիծ։

Հանգամանորեն վերլուծելով ռուսական ռևոլյուցիայի զարգացման պայմաններն ու հեռանկարները, Շահումյանն իր բազմաթիվ հոդվածներում բացահայտում էր զինված ապստամբության հարցերում գոյություն ունեցող երկու հիմնական հարցադրումների էությունը։ Խոսելով զինված ապստամբության վերաբերյալ 3-րդ համագումարում ընդունված որոշումների մասին, նա դրտնում էր, որ ռուսական համաժողովրդական-դեմոկրատական շարժումը հասունացրել է զինված ապստամբության անհրաժեշտությունը։ Բացահայտելով լիբերալ բուրժուազիայի դիրքը զինված ապստամբության մասին, Շահումյանն իր «Կադետները և սոցիալ-դեմոկրատիան» հոդվածում նշում էր, որ լիբերալ բուրժուազիան ժխտում է զինված ապստամբության և ընդհանրապես քաղաքական պայքարի անհրաժեշտությունը։ Լիբերալները շաղակրատում են նրա «Սոցիալ-հոգեբանական պայմանների» մասին, և մեղադրում են ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատներին (բոլշևիկներին) «... ծաղր ու ծանակի են ենթարկում սոցիալ-դեմոկրատիայի ձախակողմյան թևի՝ «մեծամասնականներին», «անարխիստական» տակտիկան որպես «վերացական ռևոլյուցիոնիզմ», «բունտարարականություն»[2]։ Այդ բոլոր մեղադրանքների հիմքում ընկած էր լիբերալների սարսափելի վախը ժողովրդական ռևոլյուցիայից։ Շահումյանը նույն հոդվածում մենշևիկյան տակտիկան որակում էր որպես լիբերալ բուրժուազիայի հայացքների արտացոլում, որը ոչ մի առնչություն չունի ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի հայացքների հետ։ Քննադատելով այդ օպորտունիստական տակտիկան, Շահումյանը նշում էր, որ զինված ապստամբության իրականացման, մասսաների կազմակերպման փոխարեն, մենշևիկները սահմանափակվում են «պլանավորված ապստամբության հնարավորության բացակայության»

---

[1] Ստ. Շահումյան. Երկերի ժողովածու, էջ 71։

[2] «Կայծ», № 16, 19 մայիսի, 1906։

մասին ընդհանուր դատողություններով։ Այդ տեսակետից՝ Շահումյանը մենշևիկներին համարում էր լիբերալ բուրժուազիայի մեղալի մյուս կողմը։

Շահումյանը պարզաբանում էր զինված ապստամբության հասունացման պայմանները, ցույց էր տալիս, որ մարքսիստները դնելով ռևոլյուցիայի հարցը, միշտ հաշվի են առնում երկրի պատմական կոնկրետ պայմանները։ Լենինն ուսուցանում էր, որ ապստամբության լոզունգը չի կարելի տալ որպես դիրեկտիվ այնքան ժամանակ, քանի դեռ չեն հասունացել հեղաշրջման բարենպաստ պայմանները. «Մեզ, սոցիալ-դեմոկրատներիս համար — ապստամբությունը աբստրակտ չէ, այլ կոնկրետ լոզունգ, մենք այն առաջ քաշեցինք 1897 թվականին, մենք այն ընդհանուր նախապատրաստման մտքով առաջադրեցինք 1902 թվականին, մենք այն դրեցինք որպես ուղղակի կոչ միայն 1905 թվականի հունվարի 9-ից հետո»[1]։

Կենսագործելով 3-րդ համագումարի դիրեկտիվները զինված ապստամբության մասին, Անդրկովկասի բոլշևիկները կազմակերպում էին բանվորների և գյուղացիների զինված ելույթները։ Բոլշևիկյան միութենական կոմիտեն տասնյակ հազարավոր թռուցիկներ ու կոչեր տպագրեց և մասսայականացրեց բանվորների և գյուղացիների մեջ՝ կոչ անելով նրանց դեպի զինված ապստամբության։ Լենինը խոշոր նշանակություն էր տալիս Անդրկովկասի բանվորների և գյուղացիների զինված ելույթներին։ Պատահական չէր, որ ՌՍԴԲՊ-ի 3-րդ համագումարը հատուկ որոշում ընդունեց Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժումների մասին և կազմակերպություններին տվեց ճիշտ դիրեկտիվ՝ ռևոլյուցիան ծավալելու գործում։

Բոլշևիկները կոչ անելով մասսաներին զինված ապստամբության, անողոք պայքար էին մղում մենշևիկների օպորտունիստական-ռեֆորմիստական գծի դեմ։ Ստեփան Շահումյանը, զինված մարքս-լենինյան ռևոլյուցիոն թեորիայով, հետևողականորեն հանդես է գալիս մենշևիկների դեմ և պաշտպանում լենինյան տակտիկան՝ զինված ապստամբության մասին։ Տանելով հսկայական պրակտիկ ու տեսական աշխատանք, նա ջախջախիչ հարված է հասցնում մենշևիկներին ու նացիոնալիստական բոլոր պարտիաներին, որպես զինված ապստամբության և ռևոլյուցիայի հակառակորդների։ Նա 1905 թվականի հոկտեմբերի 21-ին Թիֆլիսի բանվորների ցույցի ժամանակ ունեցած իր ելույթում նրանց կոչ է անում դուրս գալ զինված ապստամբության։ Կովկասի Միութենական Կոմիտեի հանձնարարությամբ նա անց է կացնում պարտիական կազմակերպությունների ժողովներ և խորհրդակցություններ, որտեղ պարզաբանում է պրոլետարական պարտիայի և բանվոր դասակարգի խնդիրները զինված ապստամբության կազմակերպման գործում։

Յարական ժանդարմերիայի գրագրություններում հայտնաբերված են բազմաթիվ դեկուցագրեր, որոնք վերաբերում են Ստ. Շահումյանի 1905 թվականի ռևոլյուցիոն գործունեությանը։ Այդ դեկուցագրերում նշվում է, որ Շահումյանը Յարալովի, Ադիլխանովի գործարանների բանվորներին, ինչպես և զինվորներին զինված ապստամբության կոչ է արել։

1905 թվականի հոկտեմբերյան քաղաքական գործադուլների օրերին Բորչալուի գավառի պարտիական կոնֆերանսում ռուսական ռևոլյուցիայի խնդիրների և հեռանկարների մասին զեկուցումով հանդես է գալիս Շահումյանը

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 9, էջ 247։

և առաջարկում պարտիական կազմակերպություններին պատրաստվել զինված պայքարի։ Նա խնդիր է դնում տեղական կոմիտեի առաջ՝ նախապատրաստել զինված ուժերը և գավառում ծավալել պարտիզանական պայքար։

Ստ. Շահումյանի հոդվածներում զգալի տեղ է հատկացված ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարության և սահմանադիր ժողովի հարցերին։

Հայտնի է, որ պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիների ռևոլյուցիոն մասսայական ելույթներից վախեցած ցարական կառավարությունը 1905 թվականի հոկտեմբերին խոստացավ որոշ կոնստիտուցիոն «ազատություններ» և հանդես եկավ ներկայացուցչական «ժողով» գումարելու խոստումով։

Այդ առաջարկը համապատասխանում էր լիբերալ բուրժուազիայի թմբկահարած «կոնստիտուցիոն ազատությունների» պահանջին։ Մենշևիկները և նացիոնալիստական այլ պարտիաները հանդես եկան ցարի ու բուրժուազիայի այդ խորամանկ քաղաքականության պաշտպանությամբ։ Նրանք առաջարկեցին հրաժարվել ռևոլյուցիոն ուղիով սահմանադիր ժողով ձեռք բերելու պահանջից և նրա հրավիրումը թողնել դումային, որին ըստ մենշևիկների պետք է գլխավորեր լիբերալ բուրժուազիան։

Ստ. Շահումյանը, մերկացնելով մենշևիկներին, ցույց էր տալիս, որ ռուսական լիբերալ բուրժուազիան հանդիսանում է ռևոլյուցիայի և դեմոկրատիայի ոխերիմ թշնամին, նա ռևոլյուցիոն փոթորիկների շրջանում ավելի է մոտեցել ցարիզմին, դաշն կապել նրա հետ՝ ընդդեմ ժողովրդի։ Հետևաբար, բուրժուազիայի կողմից գլխավորած սահմանադիր ժողովը չէր կարող լուծել ռևոլյուցիայի առաջ դրված հարցերը։ Շահումյանը գտնում էր, որ սահմանադիր ժողովը համաժողովրդական պառլամենտ է, որի գումարումը հնարավոր է միայն հաղթական ապստամբության հետևանքով ստեղծված ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարության կողմից։ Այդ մասին նա գրել է. «Եվ իսկապես, հայտարարել Հիմնադիր ժողովի լոզունգը՝ առանց մատնացույց անելու ժողովրդական ռևոլյուցիոն ինքնագործունեությունը, որը, և միա՛յն որը, կարող է տալ մեզ Հիմնադիր Ժողով, նշանակում է ոչ մի խրատ չքաղել անցած ռևոլյուցիոն շրջանից։ Հիմնադիր Ժողով, ազատ ընտրված ամբողջ ժողովրդի կողմից, ընդհանուր, հավասար և այլն ընտրողական իրավունքով, կարող է հրավիրել ոչ թե «օրինական» Դուման, որը պետք է գոյություն ունենա հին իշխանության հետ միաժամանակ, այլ Նոր Ժամանակավոր կառավարությունը, որ ծնունդ պետք է առնի իբրև հետևանք ժողովրդական ընդհանուր «բռնկման» և իբրև միջոց հին իշխանության տապալման համար»...[1]։

Ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարության դերը Շահումյանը համարում էր այն, որ նա արտահայտեր ժողովրդի կամքը, իրականացներ պարտիայի մինիմում ծրագիրը։ Իր «Տակտիկական հարցեր» հոդվածում, նա գտնում էր, որ Հիմնադիր ժողովի գումարողը պետք է լինի Ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարությունը, որը հանդիսանալու է բանվոր դասակարգի և գյուղացիության ռևոլյուցիոն դեմոկրատական դիկտատուրա։

Իսկ այդպիսի կառավարությունը կարող է ծնունդ առնել «իբրև արդյունք ամենակատաղի և վճռական ընդհարման, որ նա կկազմվի ակտիվ ռևոլյուցիոն դասակարգերի հարազատ և հեղինակավոր ներկայացուցիչներից»[2]։

---

[1] Ստ. Շահումյան, Հոդվածներ և ճառեր, էջ 57—58։

[2] Նույն տեղում, էջ 58։

Բուրժուազիայի կողմից հրավիրվող ժամանակավոր կառավարությունը Ստ. Շահումյանը որակում էր բուրժուազիայի և ցարիզմի նեցուկը։ «Հիմնադիր ժողովը,— գրում էր Շահումյանը, որ մինչև այժմ սոցիալ-դեմոկրատիայի ծրագրային պահանջն էր, դարձավ արդեն համաժողովրդական տակտիկական պահանջ։ Այժմ պարզ է բոլորի համար, որ հետագա ռևոլյուցիոն գործողությունները պետք է կատարվեն հիմնադիր ժողովի լոզունգի տակ» ...այդ հարցում,— նշում է Շահումյանը,— «Մեր փոքրամասնականները»... նորից մի շարք կադետական թյուրիմացությունների մեջ ընկան»[1]։

Այդպիսով, Շահումյանը պաշտպանելով ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարության ստեղծման լենինյան տակտիկան, ցույց էր տալիս, որ ժողովրդի ռևոլյուցիոն պայքարի հիմնական լոզունգը հանդիսանում է ինքնակալության տապալումը և նրա փլատակների վրա նոր ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարության ստեղծումը, որը և պետք է գումարի համաժողովրդական հիմնադիր ժողովը։ Շահումյանը նշում էր, որ քանի դեռ գլխովին չի ոչնչացված բռնակալությունը և այն չի փոխարինված նոր ռևոլյուցիոն կառավարությամբ, ամեն մի ներկայացուցչական ժողով, ինչպիսի անուն էլ ունենա, իրականում կլինի բուրժուազիայի և կալվածատերերի ներկայացուցիչների ժողով և իրեն նպատակ կդնի «... իր ձեռքը հավաքել Ռուսաստանի վերակազմության գործը և իր բուրժուական շահերի համաձայն սպանել ժողովրդական մասսայի ռևոլյուցիոն շարժումը»[2]։

Տակտիկական հարցերին նվիրած իր հոդվածներում Ստեփան Շահումյանը հատուկ տեղ է հատկացրել պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի լենինյան տեսության պաշտպանությանը։ Մերկացնելով մենշևիկներին, որոնք ժխտում էին բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը և ձգտում էին պրոլետարիատին դարձնել բուրժուազիայի կցորդը, Շահումյանը ցույց էր տալիս, որ պրոլետարիատը ռևոլյուցիայի մեջ բուրժուազիայից անկախ ունի իր սեփական խնդիրներն ու շահերը։ Պրոլետարիատը բոլոր հնարավորություններն ունի ազատվելու բուրժուազիային աջակցողի վիճակից և դառնալու բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի ղեկավարը։ Շահումյանը գտնում էր, որ պրոլետարիատը, որպեսզի կարողանա դառնալ բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի առաջնորդը, ամենից առաջ պետք է ամուր դաշինքի մեջ լինի գյուղացիության հետ, քանի որ ռևոլյուցիայի հաղթանակով նույնքանով շահագրգռված է նաև գյուղացիությունը։

Գյուղացիության և պրոլետարիատի միասնական պայքարը 1905 թվականի ռևոլյուցիայի առանձնահատկություններից մեկը համարելով, Շահումյանը գրում էր. «Գյուղացիությունը թե անմիջական կռվի դաշտում և թե իր գիտակից ներկայացուցիչների միջոցով ավելի ու ավելի մոտենում է պրոլետարիատին և արյան դաշն է կապում նրա հետ՝ ընդհանուր թշնամու դեմ»[3]։

Շահումյանը ցույց է տալիս, որ ռևոլյուցիայի վճռական հաղթանակը և ցարիզմի տապալումը կարող է իրականանալ պրոլետարիատի և գյուղացիության միասնական պայքարով։ Շահումյանն իր բազմաթիվ հոդվածներում նշում է, որ պրոլետարիատին հարկավոր է ոչ թե ամեն տեսակի դաշինք, այլ

---

[1] Ստ. Շահումյան։ Հոդվածներ և ճառեր, էջ 58։

[2] «Կայծ», 1906, № 16։

[3] Ստ. Շահումյան. Հոդվածներ և ճառեր։

մարտական դաշինք, այնպիսի դաշինք, որն ապահովի երկրում դեմոկրատական կարգերի հաղթանակը, մինչև վերջ ոչնչացնի ճորտատիրական մնացորդները և ապահովի արտադրողական ուժերի արագ զարգացումը։ Այդ բանում շահագրգռված է նաև գյուղացիությունը։ Գյուղացիությունը տառապում է սովից, հողի կարիքից և պատահական չէ, որ ռևոլյուցիոն պայքարի դրոշ բարձրացրած գյուղացիները պահանջում էին «Ամբողջ հողը և ամբողջ ազատությունը»,—որոտում է գյուղացիությունը, իսկ այդ կարող է տալ նրան ոչ թե մեռնող բյուրոկրատիան, այլ միայն հաղթական ռևոլյուցիան»[1].—գրում էր Շահումյանն իր «Ապարդյուն ջանքեր» հոդվածում։

Պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի ստեղծման ու ամրապնդման համար մղվող պայքարում Շահումյանը հանդես էր գալիս մենշևիկների դեմ, որոնք գյուղացիությանը հանձնում էին լիբերալ բուրժուազիային, անտեսում էին նրա դերը ռևոլյուցիայի մեջ։ Շահումյանը, միաժամանակ, բացահայտում էր լիբերալ բուրժուազիայի կոնտրռևոլյուցիոն էությունը, նշում էր, որ լիբերալ բուրժուազիան ռևոլյուցիայի հաղթանակով շահագրգռված է այնքան միայն, որպեսզի իշխանության մեջ գրավի մինիստրական պաշտոններ և գործարք կնքի ցարիզմի հետ՝ ընդդեմ ժողովրդի։

Իր «Կադետական մինիստրություն» հոդվածում նա մերկացնում է ինչպես ցարական կառավարությանը, այնպես էլ «Կադետական պարտիային», որոնք պրոլետարիատի և գյուղացիների ռևոլյուցիոն պայքարից սարսափած, գործարք էին կնքում միմյանց հետ՝ ընդդեմ ժողովրդի և ռևոլյուցիայի։ Շահումյանը նշում էր, որ այդ ռեակցիոն երկու ուժերի գոյությանը վերջ կարող է տալ միայն բանվորա-գյուղացիական դեմոկրատական դիկտատուրայի հաղթանակը։ «Այդ մարդասպանների ու ոճրագործների գոյությանը կարող է վերջ տալ միայն ռևոլյուցիան, միայն ժողովրդական ցասումի ... բուռն ու հուժկու արտահայտությունը։ Բայց այդ բանից է, որ զարհուրում են իրենք՝ կադետները։

Ազատամիտ կալվածատերերի և բուրժուազիայի ամբողջ նպատակը կայանում է հենց նրանում, որ նրանք ուզում են «սանձահարել» ռևոլյուցիոներներին, և զինաթափ անել ռևոլյուցիան, շահագրգռելով նրան նոր (կադետական) կարգերով, այդ կադետների սեփական բառերն են, պերճախոս բառերը «զրոսպել ռևոլյուցիոներներներին», «զինաթափ անել ռևոլյուցիան»։

Ուրեմն ի՞նչ մի մխիթարական բան կա կադետական մինիստրության մեջ և ի՞նչ էր դրդում մեր մի քանի ընկերներին հրապարակ նետել մինչև անդամ իբրև լոզունգ պրոլետարիատի համար կադետական մինիստրության պահանջը։ Որ այս վերջինը մեր թյուրիմացության մի խոշոր տակտիկական սխալ էր, դա պարզ արտահայտվեց կազմակերպված ու գիտակից պրոլետարիատի համարյա միաձայն բողոքով այդ լոզունգի դեմ...»[2]։

Այդպիսով, մերկացնելով մենշևիկների օպորտունիստական, ըստ էության, լիբերալ բուրժուական տակտիկան, Շահումյանը հանդես է գալիս բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի լենինյան իդեայի ջերմ պաշտպանությամբ։ Նա այդ դաշինքի մեջ տեսնում էր ռուսական ռևոլյուցիայի լիակատար հաղթանակը, որը հող էր ստեղծում դեմոկրատական կարգերից անցնելու սոցիալիստական հասարակարգին։

Նշանակալից տեղ է գրավում Շահումյանի պայքարը բոլշևիկների տակ-

[1] Ստ. Շահումյան, Հոդվածներ և ճառեր, էջ 54։

[2] «Կայծ», № 35, 7 հուլիսի, 1906, Թերթի առաջնորդող։

տիկական գծի համար՝ պետական դումաների շրջանում։ Նա, ինչպես Լենինը, գտնում էր, որ Պետական դումաները ցարիզմի ձեռքին մի միջոց են, ռևոլյուցիոն ժողովրդի դեմ պայքարելու, ռևոլյուցիային վերջ տալու և ցարիզմի քաղաքական պետական խախտված դիրքերն ամրապնդելու համար։

Պետական դումաների հարցում մենշևիկների բռնած գիրքը Շահումյանը որակել է որպես լիբերալ բուրժուազիայի վարքագիծ։

Հայտնի է, որ մենշևիկներն անհուն հավատով էին լցված դեպի դուման և կոչ էին անում բանվոր դասակարգին ու սոցիալ-դեմոկրատական պարտիային, դադարեցնել պայքարը դումաների դեմ, գնալ դուման և պաշտպանել լիբերալ բուրժուազիայի առաջարկած «կոնստիտուցիոն» պլատֆորմը Պետական դումայում։ Այդ առթիվ բանվորներին գրած հատուկ նամակով հանդես եկավ Պլեխանովը, որը գովաբանում էր լիբերալ բուրժուական առաջին դուման և «խորհուրդ» էր տալիս ռուսական պրոլետարիատին և գյուղացիներին՝ պաշտպանել այն, քանի որ «նա հող և ազատություն է խոստանում ամբողջ ժողովրդի համար»[1]։

Վ. Ի. Լենինը Պլեխանովի այդ նամակը որակեց որպես հանցագործություն պրոլետարիատի և ռևոլյուցիայի հանդեպ։ Լենինը նշում էր, որ լիբերալ ռեակցիոն բուրժուազիան գովաբանում է Պլեխանովին հենց այն բանի համար, որ նա այնքան մեծ վստահություն է տածում դեպի բուրժուազիայի դատարկ խոստումները։

Ստեփան Շահումյանը «Պլեխանովի նամակի առթիվ» հոդվածում, մերկացնելով մենշևիկների վերաբերմունքը դեպի դումաները, ցույց էր տալիս, որ ինչպես Պլեխանովը, այնպես և մյուս մենշևիկները այդ օպորտունիստական դիրքավորումով իրենց դուրս են թողնում ռևոլյուցիայից։

Պարզաբանելով բոլշևիկյան տակտիկան դումաների հարցում, Շահումյանը նշում էր, որ դումային մասնակցելու կամ նրա նկատմամբ բոյկոտ հայտարարելու հարցում բոլշևիկները ելնում են ռևոլյուցիայի կոնկրետ պայմաններից։ Նա նշում էր, որ եթե ռևոլյուցիան վերելք է ապրում, ապա դումային մասնակցելը և նրան վստահելը հանցագործություն կլինի ռևոլյուցիայի հանդեպ։

Շահումյանը քննադատում է ՌՍԴԲՊ-ի 4-րդ միավորիչ համագումարի որոշումը 1-ին դումային մասնակցելու և այն «ռևոլյուցիայի գործիք» համարելու վերաբերյալ։ Նա այդ մասին գրում էր. «Մեր համագումարը մի խոշոր սխալ գործեց՝ ընդունելով իր հայտնի ռեզոլյուցիան Պետական Դումայի մասին։ Պետական Դուման, ասաց նա, այդ ռեզոլյուցիայով, անխուսափելի կերպով կդառնա «ռևոլյուցիայի գործիք»... Այդ սխալը ավելի խիստ կերպով անում է այժմ ընկեր Պլեխանովը... Պլեխանովը շարաշար սխալվում է և բարեբախտաբար կարող ենք ավելացնել իսկույն, որ պրոլետարիատը նույնպիսի վճռականությամբ կմերժի այդ խորհուրդը, որպիսի վճռականությամբ Պլեխանովն առաջարկում է այն»[2]։

Խոսելով դումային մասնակցելու մասին, Շահումյանը ցույց է տալիս, որ եթե բոլշևիկները փոխեցին իրենց տակտիկան և մասնակցեցին 2-րդ դումայի ընտրություններին, ապա այդ արեցին ոչ թե նրա համար, որ դուման դադարեց ռեակցիայի նեցուկը լինելուց, այլ նրա համար, որպեսզի այն օգտագոր-

[1] Տես Պլեխանովի նամակը „Курьер" թերթում, № 4, 1906։
[2] «Կայծ», № 22, 1906։

ծեն ռևոլյուցիոն պրոլետարիատի համար որպես տրիբուն։ «Մասնակցելով դումային,— նշում է Շահումյանը,—այդ չի նշանակում, որ մենք պետք է լրցվենք անսահման հավատով դեպի դուման և չպետք է թույլ տանք մեզ քննադատել նրա գործունեությունը։ Դա չի նշանակում, որ մենք պետք է իջնենք մեր դասակարգային պրոլետարական պոզիցիայից և հանձնենք մեր ամբողջ բախտը դումայում բազմած բուրժուազիային...» [1]։

• Այսպիսով, Ստեփան Շահումյանը 1905 թ. ռևոլյուցիայի շրջանում մենշևիկների ու մարքսիզմի մյուս թշնամիների դեմ մղած պայքարում հանդես է եկել և պաշտպանել լենինյան ստրատեգիան ու տակտիկան։ Նա այդ պայքարում դրսևորում է իրեն որպես կայուն լենինյանի, մարքսիստ տեսաբանի։

Շահումյանն իր ռևոլյուցիոն պրակտիկ գործունեության մեջ հարազատ է մնացել լենինյան ստրատեգիական ու տակտիկական գծին, ընկեր Ստալինի հետ միասին անհաշտ պայքար է մղել կովկասյան մենշևիկների ու նացիոնալիստների դեմ, պրոլետարիատին և գյուղացիությանը համախմբելով բոլշևիկյան դրոշի տակ՝ հանուն համաժողովրդական ռևոլյուցիայի հաղթանակի։

---

[1] «Կայծ». № 22, 1906։